ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵՑ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՀԱՅԱԳԵՏ ՀԵՐՄԱՆ ԳՈՒՑԻՆ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԵՎ ՔԱՋԱՐԱՆԻ ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՏՆՕՐԵՆ ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու շքանշաններ հանձնեց Սյունիքի մարզպետ Էդիկ Բարսեղյանին, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Մաքսիմ Հակոբյանին և գերմանացի անվանի հայագետ, Հալլեի համալսարանի պրոֆեսոր Հերման Գոլցին (տե՛ս էջ 22): Տիարք Էդիկ Բարսեղյանն ու Մաքսիմ Հակոբյանն արժանացան «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի՝ իրենց եկեղեցանվեր գործունեության և Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցմանը բերած կարևոր ավանդի համար (տե՛ս «Էջմիածին», Թ, էջ 3, Ժ, էջ 18):

«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան հանձնվեց գերմանացի գիտնականին: Պրոֆեսոր Հերման Գոլցը հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու ջերմ բարեկամն է: Նրա ջանքերի շնորհիվ է, որ այսօր Հալլեի համալսարանում գործում է Ս. Մեսրոպ Մաշտոց գիտական-աստվածաբանական կենտրոնը: Դրն Գոլցի ջանքերի արդյունք էր նաև երկու տարի առաջ Հալլեում կայացած «Հայաստան - 2000» միջազգային գիտաժողովը և Կիլիկիայի հայ արվեստի ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Անվանի հայագետը նաև կարևոր ու արժեքավոր աշխատանք է կատարել՝ ի մի բերելով Հովհաննես Լեփսիուսի արխիվը՝ հանրությանը առավել մատչելի դարձնելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր:

Հանդիսության ընթացքում շքանշանակիրների եկեղեցանվեր ու հայանվեր գործունեությանն անդրադարձան Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանն ու Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո հանդիսավորությամբ ներս բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակները, որոնք ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Գերմանացի հայագետը Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց նման պատվի արժանանալու համար՝ հավաստիացնելով, որ այսուհետ ևս ամեն ինչ կանի՝ հայ-գերմանական մշակութային կապերի առավել սերտացման համար: Երախտագիտության խոսքեր ասացին նաև Է. Բարսեղյանն ու Մաքսիմ Հակոբյանը:

Վերջում ներկաներին իր հայրապետական խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ.
ՁԱԽԻՑ ԱՋ՝ ՀԵՐՄԱՆ ԳՈՒՑ, ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ